«ԱՇՏԱՐԱԿ-ԿԱԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2008-2009

Ընկերությունը 2008-2009թթ. գործել է ոչ պարզ տնտեսական պայմաններում, բարդ մրցակցային միջավայրում: Նման իրավիճակում որպես կարևորագույն արժեք Ընկերությունը կարևորում է իր շահառուների վստահությունն իր և իր արտադրանքի նկատմամբ: Ընկերության գործունեության արդյունավետության բանաձևը հանգում է Ընկերության և հասարակության շահերի համապատասխանությանը, հասարակության առողջ պահանջմունքների և սպասումների բավարարմանը: Հետևաբար, Ընկերությունը շարունակելու է ջանքեր գործադրել Գլոբալ պայմանագրի սկզբունքների ներդրման և առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման ուղղությամբ:

Ընկերությունը սոցիալական պատասխանատվությունը դիտարկում է որպես զարգացման, աճի հնարավորություն. քանի որ մասնակցությունը հասարակության և շրջակա միջավայրի հիմնախնդիրների լուծմանը Ընկերությանը տալիս է մրցակցային առավելություններ, իսկ վերջիններս բացում են զարգացման նոր հեռանկարներ: Հետևաբար, սոցիալական պատասխանատվությունը Ընկերության համար ոչ թե գործունեություն է ի լրացումն իր հիմնական գործունեությանը, այլ Ընկերության կառավարման եղանակ, որի միջոցով Ընկերությունը ձգտում է իր տնտեսական նպատակները հավասարակշռել սոցիալական և բնապահպանական նպատակներով ու ցանկացած որոշման հիմքում տեսնել ներկա և ապագա սերունդների բարեկեցությունը:

Հայկ ԱՓՈՅԱՆ
«Աշտարակ-Կաթ» ՓԲԸ
տնօրենների խորհրդի նախագահ

ՆԱԽԱԲԱՆ

«Աշտարակ-Կաթ» ընկերությունը փակ բաժնետիրական ընկերությունն է: Ընկերության գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում՝ Դրոյի 13 հասցեում: Ընկերության կաթնամթերքի, պաղպաղակի և պանրի արտադրամասերը գտնվում են Հայաստանի Արագածոտն ու Գեղարքունիկ մարզերում: Ընկերությունն ունի 565 աշխատակից:

Ընկերությունն արտադրում է՝

- ***Կաթնաթթվային մթերք***. կաթ, մածուն, թթվասեր, կաթնաշոռ, թան, կեֆիր, կարագ, չոր անարատ կաթ,
- ***Յոգուրտներ և կաթնային դեսերտներ***. յոգուրտներ, խմելի յոգուրտներ, ջնարակված պանրիկներ, կաթնային կրեմներ,
- ***Պանիրներ***. հալած պանիր, լոռի, չանախ, եղեգնաձոր, սուլուգունի, չեչիլ, կանաչիով պանիր,
- ***Պաղպաղակ***,
- ***Սառույց***,
- ***Մուրաբաներ և ջեմեր***:

Ընկերության հիմնական ապրանքանշաններն են՝

- ***«Աշտարակ-Կաթ»*** - կաթնամթերք, պաղպաղակ,
- ***«Յո-Յո»*** - կաթնամթերք, պաղպաղակ հատուկ երեխաների համար,
- ***«Լեգենդի Արմենիի»*** - մուրաբաներ և ջեմեր,
- ***«Այսմեն»*** - փաթեթավորված սառույց:

Ընկերությունն իր արտադրանքն իրացնում է Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև արտահանում է Վրաստան, ԱՄԷ և ՌԴ:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Ընկերության և բաժնետերերի փոխհարաբերությունները կառուցվում են բաժնետերերի ֆինանսական, իրավական և կառավարման իրավունքների առավելագույնս պաշտպանվածությունն ապահովելու սկզբունքի վրա: Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարվում է անկախ մասնագիտացված կառույցի՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, որը հանդիսանում է NASDAQ OMX խմբի անդամ:

Ընկերության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է տնօրենների խորհուրդը, որի հիմնական խնդիրն է Ընկերության կայունության, շահառուների հետ հավասարակշռված հարաբերությունների, Ընկերության բարի համբավի ու հեղինակության ապահովումը: Ընկերության տնօրենների խորհրդի իրավասությունները ընդհանրական առումով կարելի է ներկայացնել հետևյալ խմբերում.

- Ընկերության զարգացման ռազմավարության մշակում և իրականացման նկատմամբ վերահսկողություն,
- կայուն զարգացման արդյունավետ համակարգի ձևավորում,
- ակտիվների կառավարում,
- կորպորատիվ մշակույթի զարգացում:

Ընկերության տնօրենների խորհրդի գործունեությունը, այդ թվում՝ իրավասությունների շրջանակը կարգավորվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված Տնօրենների խորհրդի կանոնակարգով: Ընկերության տնօրենների խորհրդի կազմում ներգրավված չեն գործադիր մարմնի անդամներ: Ընկերության տնօրենների խորհրդի կազմում ներկայացված են բաժնետեր չհանդիսացող երկու անդամ: Ընկերության տնօրենների խորհրդի անդամները պարբերաբար հանդիպում են Ընկերության գործադիր մարմնի անդամների հետ, մասնակցում նրանց խորհրդակցություններին:

Ընկերությունն ունի վարքագծային կանոններ, որոնցում սահմանվում են Ընկերության հիմնական կորպորատիվ արժեքները, վարքագծային սկզբունքները Ընկերության հիմնական շահառուների նկատմամբ, ինչպես նաև շահերի բախման և տեղեկատվական թափանցիկության հիմնախնդիրները կարգավորող կանոնները:

Ընկերության բարձրագույն ղեկավարության գործունեության գնահատման և դրանց արդյունքներով վարձատրության և խրախուսման կառուցակարգերի զարգացման համար Ընկերությունում ներդրվել է կառավարման բալանսավորված ցուցանիշների համակարգը:

Ընկերության հիմնական շահառուներն են հանդիսանում՝

- բաժնետերերը,
- սպառողները,

- աշխատակիցները,
- գործընկերները,
- տեղական համայնքը:

Ընկերության կողմնորոշվածությունը դեպի շահառուների նշված խմբերը պայմանավորված է Ընկերության կայուն և շարունակական զարգացման անհրաժեշտությամբ:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ընկերությունը կարևորում է հարգանքը մարդու միջազգայնորեն ճանաչված իրավունքների նկատմամբ և մարդու իրավունքների խախտումներում հանցակցությունից զերծ մնալը, ինչն արտահայտվում է Ընկերության «Վարքագծային կանոններում», հատկապես վարքագծային ընդհանուր կանոններում, ինչպես նաև վարքագծի կանոնները Ընկերության աշխատակիցների, մրցակիցների և գործընկերների նկատմամբ բաժիններում:

Ընկերությունը խուսափում է աշխատակիցների նկատմամբ խտրական վերաբերմունք ներկայացնող քաղաքականության իրականացումից և աշխատակիցների համար երաշխավորում է հավասար իրավունքներ ու հնարավորություններ: Ընկերությունն ապահովում է աշխատանքի անվտանգ պայմաններ, խրախուսում է աշխատակիցների մասնագիտական ունակությունների ու գիտելիքների զարգացումը:

Ընկերությունն իր գործընկերների հետ ձևավորում է ազնիվ ու արդարացի, երկարաժամկետ ու կայուն հարաբերություններ, վարում է գնային փոխշահավետ և կայուն քաղաքականություն, ապահովում է պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարում, ինչպես նաև տեղական համայնքների զարգացման և ուժեղացման նպատակով իր հիմնական գործընկերների՝ կաթ մթերող ֆերմերների նկատմամբ ցուցաբերում է տնտեսական և տեխնիկական աջակցություն:

Տեղական համայնքների տնտեսական կենսակերպի պաշտպանության ուղղությամբ Ընկերությունը 2008-2009թթ. իրականացրել է հետևյալ միջոցառումները.

- 2008թ. CARD-ի հետ համատեղ իրականացվող «Տեխնիկական աջակցության ծրագիր սննդի անվտանգության համակարգը բավարարելու համար» ծրագրի շրջանակում Հայաստանի Գեղարքունիկի, Շիրակի, Լոռու, Սյունիքի, Արագածոտնի մարզի շուրջ 25 համայնքների 250 ֆերմերային տնտեսություններին է բաշխվել կթի ու կաթնարտադրության լվացող, մաքրող սարքավորումներ:

- 2008թ. «Հայաստան» Համահայկական հիմնադրամի, իսկ 2009թ. «Սիվիլիթաս» հիմնադրամի հետ համագործակցությամբ Ընկերությունը նախաձեռնեց Հայաստանի ֆերմերային տնտեսություններին կովերի համար նախատեսված մեքենայացված կթի սարքավորումների տրամադրման աշխատանքները: Մեքենայացված կթի սարքավորումներ են տրամադրվել շուրջ 50 ֆերմերային տնտեսություններին:

- Ընկերության կողմից աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Կառավարության, Գյուղատնտեսության աջակցության կենտրոնի ու Համաշխարհային Բանկի համատեղ մշակվող «Անասնապահության զարգացման ծրագրի» նախապատրաստման աշխատանքներին: Ընկերության կողմից նախատեսվում է աջակցություն նաև Ծրագրի իրականացման փուլում:

- Ընկերությունը խորհրդատվական և կազմակերպչական բնույթի աջակցություն է ցուցաբերել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Տավուշի մարզի Ազատամուտ համայնքում կաթի հավաքման և առևտրի (մարքետինգի) կենտրոնի հիմնադրման աշխատանքներին, որը պետք է ապահովի շրջակա համայնքների ֆերմերային տնտեսություններից կաթի մթերումը:

- Ընկերությունը խորհրդատվական և կազմակերպչական բնույթի աջակցություն է ցուցաբերել նաև «Ակցիա սովի դեմ» միջազգային կազմակերպության կողմից Սյունիքի մարզի Անգեղակոթ և Թասիկ համայնքներում կաթի հավաքման և առևտրի կենտրոններ հիմնադրելու աշխատանքներին:

- CARD-ի հետ համատեղ Ընկերությունը «Կաթի անվտանգության և կթի հիգիենայի բավարարում» ծրագրի շրջանակներում «Սննդի անվտանգությունը» թեմայով ուսուցման դասընթացներ են կազմակերպել Հայաստանի 25 համայնքներում:

- 2008-2009թթ. Ընկերությունը ապրանքային կանխավճարի տեսքով իր հետ համագործակցող ֆերմերային տնտեսություններին բաշխել է գարի, կարտոֆիլի սերմնացու, հակավորման թել:

Տեղական համայնքների զարգացմանն ուղղված միջոցառումներն իրականացնելիս Ընկերությունը առաջնորդվում է հետևյալ նպատակներով.

- Հայաստանի ֆերմերային տնտեսությունների համար կաթի իրացման կայուն շուկայի և եկամուտների ապահովում,

- Հայաստանի սահմանամերձ տարածաշրջաններում ազգաբնակչության ամրապնդմանը նպաստում,

- Նոր աշխատատեղերի ձևավորում,

- Անասնապահության ոլորտում հնարավոր խնդիրների հաղթահարմանն աջակցում,

- Բարձրորակ անարատ կաթի ստացում և համապատասխանաբար Ընկերության սպառողներին բարձրորակ կաթնամթերքով ապահովում:

ԱՇԽԱՏԱՆՔ

Ընկերությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Աշխատանքային օրենսգրքով, Ընկերության վարքագծային կանոններով, մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությամբ, ներքին կարգապահական կանոններով, ինչպես նաև լոկալ իրավական ակտերով:

Ընկերությունն իր անձնակազմի հետ չի կնքել կոլեկտիվ պայմանագիր, սակայն կոլեկտիվի անդամներին հուզող հիմնախնդիրների վերաբերյալ Ընկերությունում կազմակերպվում են խորհրդակցություններ, որոնց արդյունքում ընդունվում են որոշումներ հուզող հիմնախնդրի լուծման վերաբերյալ:

Ընկերության բոլոր աշխատողները նախապես տեղեկացվում են իրենց հանձնարարվող աշխատանքի, աշխատանքային պայմանների, վճարման կարգի, իրենց իրավունքների ու պարտականությունների մասին: Նրանց տրամադրվում է աշխատանքային պայմանագրի իրենց հասանելիք օրինակը: Ընկերությունն աշխատողներին տրամադրում է վճարվող և չվճարվող արձակուրդ, ապահովում է անվտանգ աշխատանքային պայմաններ, աշխատանքի ընդունելու ժամանակ, ինչպես նաև աշխատելու ընթացքում աշխատողին ծանոթացնում է Ընկերության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին, աշխատակիցների համար ստեղծում է աշխատանքային անհրաժեշտ պայմաններ, այդ թվում՝ հատկացնում իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական և նյութական միջոցներ: Ընկերությունն ուշադիր է աշխատակիցների կարիքների ու պահանջների նկատմամբ, ջանում է բարելավել նրանց աշխատանքի ու կենցաղի պայմանները:

Ընկերությունում բացառվում է մանկական աշխատուժի օգտագործումը: Ընկերության բոլոր աշխատակիցները չափահաս են:

Աշխատատեղերի համալրման ժամանակ նախապատվությունը տրվում է աշխատուժի ներքին ռեսուրսներին՝ Ընկերության աշխատակիցներին, իսկ համապատասխան առաջարկի բացակայության դեպքում աշխատատեղի համալրումը կատարվում է աշխատանքի շուկայից՝ մրցութային կարգով:

Ընկերության կառավարման բոլոր օղակներում տիրում է գենդերային հավասարություն:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունը կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը դիտարկում է որպես կայուն զարգացման հայեցակարգի բաղկացուցիչ, որի ազդեցությունն ուղղված է ոչ միայն ներկա, այլև ապագա սերունդներին: Այս տեսանկյունից Ընկերությունը կարևորում է շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված միջոցառումները և իր վարքագծային կանոններով ու գործունեությամբ երաշխավորում է բնակչության և շրջակա միջավայրի համար անվտանգ արտադրանքի թողարկում ու ծառայությունների մատուցում:

Մոնրեալի պայմանագրի համաձայն՝ օզոնային շերտի պահպանության նպատակով 2008-2009թթ. Ընկերությունում ապամոնտաժվել են Ֆրիոն R12 գազով աշխատող սարքավորումները և նոր սարքավորումների մոնտաժումը կատարվել է Ֆրիոն R22 գազի օգտագործման համար:

Ընկերությունը կարևորում է Հայաստանի անտառային ռեսուրսների վերականգնումը: Հետևաբար, անտառային ռեսուրսների պահպանման և արդյունավետ կառավարման նպատակով Ընկերությունը կանոնավոր հանգանակություններ է կատարում «Հայաստանի անտառների վերականգնման և զարգացման» հիմնադրամին:

Յուրաքանչյուր տարի շրջակա միջավայրի պահպանության համաշխարհային օրը՝ հունիսի 5-ին, Ընկերությունը կաթի մթերման իր հիմնական կետերում կազմակերպում և անց է կացնում բնապահպանությանը նվիրված միջոցառումներ:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված իր միջոցառումներն Ընկերությունն իրականացնում է հիմնվելով Համաշխարհային պայմանագրի 10-րդ սկզբունքի վրա. Գործարար հատվածը պետք է աշխատի կոռուպցիայի բոլոր ձևերի դեմ, ներառյալ՝ շորթումը և կաշառակերությունը: Բացի այդ, Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի ձևավորման հիմքում ընկած են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կորպորատիվ կառավարման սկզբունքները (2004):

Ընկերությունը համոզված է, որ կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգը, որը ենթադրում է բաժնետերերի և այլ շահառուների իրավունքների պաշտպանություն, տեղեկատվական թափանցիկություն, կառավարման մարմինների իրավասությունների հստակ տարանջատում, հաշվետվողական համակարգի առկայություն և պատասխանատվության շրջանակների հստակեցում, բիզնես էթիկայի սկզբունքներով առաջնորդում, հանդիսանում է կոռուպցիայի դեմ պայքարի գործուն միջոց: Հետևաբար, Ընկերությունն իր ջանքերն ուղղում է լավագույն փորձին ու միջազգային սկզբունքներին համահունչ կորպորատիվ կառավարման համակարգի ձևավորմանը:

Ներկորպորատիվ կոռուպցիայի դեմ պայքարի ուղղվածություն ունի Ընկերության վարքագծային կանոնների հետևյալ դրույթը. իր աշխատանքային պարտականությունները կատարելու համար Ընկերության աշխատակիցներին արգելվում է նվերների ընդունումը:

Ընկերության համար կոռուպցիայի դեմ պայքարի գործուն կառուցակարգ է Ընկերության գործունեության իրավական համապատասխանության ապահովումը: Այս խնդրի իրագործման համար Ընկերության տնօրենների խորհրդի կողմից ձևավորվել է ներքին աուդիտի ստորաբաժանում, որի հիմնական նպատակներն են ռիսկերի արդյունավետ կառավարում, ներքին հսկողության համակարգի արդյունավետության և հուսալիության ապահովում, ֆինանսական և կառավարչական տեղեկատվության ամբողջականության ու արժանահավատության ապահովում, օրենսդրության դրույթների կատարման ապահովում: